ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ. հոկտեմբերի 2-ից 6-ը Հնդկաստանի քաղաք Նագպուր գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

Անդրանիկ Հակոբյան

ՀՀ ՊԵԿ համալիր հարկային ստուգումների վարչության տրանսֆերային գնագոյացման և հարկային համաձայնագրերի կիրառման բաժնի պետ:

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Հնդկաստանի քաղաք Նագպուր, 2023թ. հոկտեմբերի 2-ից 6-ը:

3. **Հրավիրող կողմը.**

Ասիական զարգացման բանկ:

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Մասնակից երկրների և միջազգային փորձագետների կողմից գործնական քննարկում՝ ՏՀԶԿ «Հարկվող բազայի քայքայում և շահույթի տեղաշարժ» ծրագրի 1-ին Գործողության («Թվային տնտեսության մարտահրավերներ») ներդրման նպատակով առաջարկվող միջազգային լուծումների վերաբերյալ:

5. **Քննարկված թեմաները.**

- ՏՀԶԿ «Հարկվող բազայի քայքայում և շահույթի տեղաշարժ» ծրագրի 1-ին Գործողության («Թվային տնտեսության մարտահրավերներ») 2 Հենասյունները
- Գործնական օրինակներ,
- Որոշ երկրների փորձը՝ տվյալ ստանդարտի ներդրման ուղղությամբ:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Քննարկվում էին վերոնշյալ թեմաները և մասնակից երկրների փորձը:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Հանդիպման ընթացքում քննարկվել է ՏՀԶԿ «Հարկվող բազայի քայքայում և շահույթի տեղաշարժ» ծրագրի 1-ին Գործողության ներդրման ուղությունը և մասնակից երկրներին առաջարկվել է նաև նշել թեմաներ՝ ապագայում նման գործնական քննարկումներ անցկացնելու նպատակով:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկվել է նման գործնական հանդիպումներ կազմակերպել հաճախակի և համապատասխան թեմաների վերաբերյալ առաջարկները նշել անցկացված հանդիպման վերաբերյալ հարցման մեջ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

10/10/2023թ.